«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	_ № **8** Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում _____
ԱՌԱՐԿԱ	___ ֆիզիկա _____
ՀԵՂԻՆԱԿ	__ Արտոյան _ Աշոտ _____
ՄԱՐԶ	__ Շիրակ _____
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	__ «Ֆոտոն» _ վարժարան _____

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Բաժին 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ ՈՒՍՈՒՑՉԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԻՄՔԸ 4

1.1. Սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների՝ ընտանիքի հետ ուսուցչի փոխգործակցությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթների դիտարկում 5

1.2. ԿԶՊԾ պահանջները ընտանիքի հետ փոխգործակցության բովանդակության և կազմակերպչական ասպեկտների վերաբերյալ 7

Բաժին 2. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 8

2.1. Հիմնական հասկացություններ 8

2.2. Փոխգործակցության էությունը 9

2.3. ԿԶՊԾ-ն որպես հանրային/սոցիալական պայմանագիր, ընտանիքի, հասարակության և պետության սոցիալական պատվեր 12

Բաժին 3. ԱՊԱԳԱ ԸՆՏԱՆԵՍԵՐ ՄԱՐԴՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ 14

3.1. Դպրոցի եւ ընտանիքի փոխգործակցությունը ժամանակակից փուլում 14

3.2. Դպրոցի եւ ընտանիքի համատեղ գործունեության բովանդակությունը եւ ձեւերը 16

Եզրակացություն եւ առաջարկություններ 19

Օգտագործված գրականության ցանկ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<u>Հետազոտության կարեւորությունը</u>. Կրթության ոլորտում ստեղծված իրավիճակը պահանջում է ընտանեկան եւ կրթական ինստիտուտների միջեւ նոր հարաբերությունների կառուցում, հասարակական փոփոխությունների բնույթի ճանաչում, դիրքորոշումների համաձայնեցում, մանկավարժական ու ծնողական համայնքների կողմից ընդունելի հայեցակարգի մշակում, կրթության զարգացման պետական ծրագրի (ԿԶՊԾ) գործարկում:

Ընտանեկան դաստիարակության զարգացման տիրույթի՝ դպրոցի ու միջավայրի համատեղ աշխատանքի արդյունավետությամբ է պայմանավորված անհատի ձեվավորումն ու զարգացումը:

Դպրոցի, որպես դաստիարակության կենտրոնի կազմակերպիչ, գործունեության կարեւորագույն ուղղություններից մեկը դպրոցի, ընտանիքի եւ համայնքի ջանքերը միավորելն է: Այդ աշխատանքի, բովանդակության, մեթոդների ու ձեւերի առանձնահատկությունը մանկավարժության օրինաչափությունների իմացությունն է, ժամանակակից պայմաններում դպրոցի եւ ընտանիքի զարգացման յուրահատկությունների ու միտումների հստակ պատկերացումը, ծնողների հետ աշխատելու ուսուցչի իրական պատրաստականությունը:

Դպրոցն ու ընտանիքը հասարակության ամենաառանցքային սոցիալական ինստիտուտներն են, որոնք անմիջականորեն իրականացնում են երեխաների կրթությունը եւ ընտանեկան դաստիարակության մանկավարժական կառավարումը՝ սերտորեն առնչվելով հասարակության սովորույթների, վարքի կանոնների, սպասումների, օրենքների հետ:[1] Բոլոր աշխատողների ու պաշտոնյաների վարքագծի հիմքում ընկած է ընտանեկան դաստիարակությունը: Հետեվաբար՝ տարբեր ոլորտներում ընտանիքների առաջադիմության արդյունքում նույնպես առաջադիմելու է հասարակությունը:[2]

<u>Հետազոտության նպատակը</u> սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում ուսուցչի սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) հետ համագործակցության եւ դրա կարեւորության դիտարկումն է:

<u>Հետազոտության խնդիրները</u>

1) Գնահատել դպրոցի, սովորողների եւ նրանց ընտանիքների համագործակցությունը՝ միասնական կրթական միջավայրի ձեւավորման տեսանկյունից:

2) Վերլուծել կրթական ոլորտի նորմատիվ փաստաթղթերը, դպրոցի զարգացման ծրագիրը, դաստիարակչական հարցերում ծնողների ձեռնահասությունը:

3) Որոշել ուսուցչի, սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) հետ փոխգործակցության բովանդակությունը, ձեւերն ու մեթոդները:

Հետազոտության մեթոդները

- Մանկավարժական, սոցիալ-հոգեբանական գրականության տեսական վերլուծություն, համադրական ընդհանրացումներ:
- Փորձարարական մեթոդներ. դիտարկումներ ու հարցազրույցներ, ոլորտի օրենսդրական ու իրավական փաստաթղթերի ուսումնասիրում, ինքնագնահատում:

Հետազոտության շրջանակը

Հետազոտությունն իրականացվել է Գյումրու «Ֆոտոն» վարժարանի VII-XII դասարաններում՝ 30 ուսուցչի (6-ը դասղեկ), 60 ծնողի եւ 30 աշակերտի շրջանում:

Հետազոտության փուլերը

Հետազոտությունն անցկացվել է 3 փուլով: Առաջին փուլում ուսումնասիրվել են կրթության ոլորտի գրականությունը, օրենսդրական փաստաթղթեր, մամուլի հրապարակումներ: Որոշակիացվել են դպրոցի եւ ծնողական համայնքի համագործակցության ու դրա արդյունավետության վերաբերյալ առկա մոտեցումները: Երկրորդ փուլում իրականացված դիտարկումներով ու հարցազրույցներով որոշակիացվել են ուսուցչի եւ ծնողների (ներկայացուցիչների) համագործակցության բովանդակությունը, ուղղությունները, գնահատվել է միջավայրի ազդեցության գործոնը, կատարվել է սեփական փորձի ինքնագնահատում: Երրորդ փուլում ամփոփվել են տեսական վերլուծության արդյունքները, իրականացվել է համադրական վերլուծական աշխատանք:

Հետազոտության արդյունավետությունը

Նորովի է կարեւորվում դպրոց-ընտանիք համագործակցության նշանակությունը՝ սովորողների կրթության՝ ուսման ու դաստիարակության գործում, արժեւորվում է ընտանիքի/ծնողի դերը՝ հանրակրթության հիմնախնդիրները հաղթահարելու, մանկավարժական աշխատանքի արդյունավետության հարցում: Բացահայտվեց ծնողական համայնքի պատրաստվածության աստիճանը, կրթությանն ու իրենց դերակատարությանն առնչվող, կարիքները: Դիտարկվեցին լուծումների տարբերակներ ու առաջարկներ:

Բաժին 1.

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ ՈՒՍՈՒՑՉԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԻՄՔԸ

կամ կրթական իրավունքը՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով

Սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների, ընտանիքի հետ ուսուցչի փոխգործակցության կազմակերպման իրավական դաշտը բաղկացած է հետևյալ փաստաթղթերից.

— Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող տեղական ու միջազգային իրավական ակտեր:

— «ՀՀ Սահմանադրությունը» եւ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը,

— «Կրթության մասին» եւ «Հանրակրթության մասին» ՀՀ Օրենքները,

— «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ օրինակելի կանոնադրությունը,

— «ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը (նախագիծ)՝ համապատասխան հավելվածով:

— «ՀՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը եւ նկարագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը,

1.1. Սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների, հետ ուսուցչի փոխգործակցությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթների դիտարկում:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը իրավական պայմաններ է ստեղծում կրթական համակարգի, պետական եւ հանրային պահանջներին համապատասխան, նորացման եւ զարգացման համար, ընդլայնում է քաղաքացիների կրթական հնարավորությունները: ՀՀ կրթության արդիականացման ռազմավարական ուղղություններից է դպրոցի/ուսուցչի եւ ծնողական համայնքի/ծնողի գործընկերությունը:

— Ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների, իրավական կարգավիճակը ընտանեկան, քաղաքացիական եւ կրթական իրավունքի համալիր ինստիտուտ է: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պարտավորությունների ուժով ծնողները, որպես օրինական ներկայացուցիչներ, կրթական հարաբերությունների ոչ միայն լիազորված, այլև ուսումնական գործընթացի ինքնուրույն մասնակիցներ են եւ ներկայացնում են անչափահաս սովորողների օրինական շահերը՝ առանց հատուկ լիազորությունների: Օրենքում ամրագրված իրավունքը ենթադրում է կրթական հարաբերությունների բոլոր սուբյեկտների՝ ուսուցիչների, աշակերտների, ծնողների, կրթական կազմակերպությունների, տարբեր մակարդակների կրթական մարմինների, ՀԿ-ների եւ գործատուների ակտիվ մասնակցությունը՝ հանրության կրթական համակարգի ձեւավորմանը:

— Դաստիարակության եւ կրթության գործում ծնողների նախապատվությունը.

— Ծնողներին տրվում են կրթական գործունեությանը մասնակցելու լայն լիազորություններ: Սահմանված է ծնողների՝ սովորողների ամեն տեսակ հետազո-

տությունների մասին լիարժեք տեղեկություն ստանալու, այդ հետազոտություններին ներկայության, դրանց անցկացումը մերժելու իրավունք: Նրանք իրավազոր են երեխայի համար որոշակի ուսումնական հաստատությունում կրթության որոշակի ձեւ ընտրելու:

— Օրենսդրական մակարդակում ներդրված են սովորողների եւ նրանց ծնողների իրավունքների պաշտպանությունը կարգավորող նորմեր:

— Հատուկ ուշադրություն է դարձվում հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությանը, ուսուցչի եւ սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) հետ փոխգործակցությանը:

Սովորողների կրթական շահերի պաշտպանությունն երաշխավորող ՀՀ Սահմանադրական դրույթներն արտահայտված են 36 ու 39-րդ հոդվածներով, իրենց երեխաների նկատմամբ ծնողների, (օրինական ներկայացուցիչների) պարտավորություններ՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41, 43, 51, 52 ու 53-րդ հոդվածներով: Երեխաների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությունը դրվում է նրանց ծնողների վրա: Ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ: Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան:

ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի* 178-րդ հոդվածի համաձայն՝ <u>ծնողների եւ նրանց փոխարինող անձանց կողմից երեխաների դաստիարակության եւ ուսուցման պարտականությունները չկատարելը</u> առաջացնում է, խախտման բնույթից կախված, տուգանքի նշանակում ծնողների կամ նրանց փոխարինող անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 10, 30, 50, 80%-ից մինչեւ դրա լրիվ չափը:

<u>ՀՀ Քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝</u> պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 50-պատիկից 100-պատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը 4 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա՝ 1-ին մաս, և 2-րդ. նույն արարքը, որը զուգորդվել է անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 100-պատիկից 200-պատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա:

Ուսուցիչը պարտավորություն ունի մշտապես համագործակցելու սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) հետ՝ սովորողների կրթության կազմակերպման եւ ընտանեկան դաստիարակության հարցերում[1]: Ծնողն էլ պետք է հասկանա, որ իր երեխայի կրթության եւ դաստիարակության պատասխանատվությունն ամբողջությամբ իր վրա է: Ինքը պետք է ակտիվ դիրք զբաղեցնի կրթական ու դաստիարակչական գործընթացում, դառնա կրթական հանրության լիարժեք սուբյեկտ:

Ուսուցչի մասնագիտական չափորոշիչը սովորողների ծնողների հետ աշխատելու համար անհրաժեշտ ձեռնահասությունները (կոմպետենցիաները) սահմանող, դրույթներն են.

— դաստիարակության հարցերում ընտանիքին օգնելը, սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) կառուցողական կրթական ջանքերը օգտագործելը.

— երեխայի անհատական զարգացման ծրագրի մշակում (այլ մասնագետների) եւ ծնողների (օրինական ներկայացուցիչների) հետ համատեղ:

— Սովորողների, նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), ուսումնական գործընթացի մյուս մասնակիցների (ուսուցիչ-հոգեբան, մեթոդիստ և այլն) հետ համատեղ առաջիկա զարգացումների տիրույթի որոշում, սովորողների անհատական կրթական ուղեգծի եւ զարգացման անհատական ծրագրի մշակում եւ, անհրաժեշտության դեպքում, իրացում:

Մանկավարժը պարտավոր է 1) իմանալ, ծնողական համայնքի հետ արդյունավետ աշխատելուն նպաստող, ընտանեկան հարաբերությունների հիմնական օրինաչափությունները. 2) կարողանալ հաղորդակցվել տարբեր տարիքի սովորողների եւ նրանց ծնողների (ներկայացուցիչների), մանկավարժ եւ այլ աշխատողների հետ:

Մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու նկարագիրը 3-րդ հիմնական փաստաթուղթն է, որը պարտավորեցնում է ուսուցչին՝ մեծ ուշադրություն դարձնել ծնողների հետ փոխգործակցությանը: Օրինակ՝ ուսուցչի պաշտոնային պարտականությունները՝ 9-րդ, 2-րդ, կոնկրետ կետերի դրույթներով:.

1.2. ԿԶՊԾ պահանջները ընտանիքի հետ փոխգործակցության բովանդակության եւ կազմակերպչական ասպեկտների վերաբերյալ

— Դիտարկենք կրթության զարգացման պետական ծրագիրը (ԿԶՊԾ) որպես կրթության համար պարտադիր պահանջների ամբողջություն.

— դիտարկենք կրթության ձեւերը.

— մեծահասակների փոխազդեցության անհատական զարգացման եւ մարդասիրական բնույթի սկզբունքը.

— երեխաների առողջության զարգացման ու պահպանման, կրթության եւ պաշտպանության հարցերում ընտանիքին հոգեբանամանկավարժական աջակցությամբ ապահովում եւ ծնողների (օրինական ներկայացուցիչների) ձեռնահասության՝ կոմպետենցիայի բարձրացում.

— աջակցել ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) երեխաներին դաստիարակելու, նրանց ֆիզիկական ու հոգեկան առողջության պահպանման եւ ամրապնդման, անհատական կարողությունների զարգացման ու նրանց զարգացման խախտումները շտկելու գործում,

— Ուսուցչական անձնակազմի փոխգործակցության առանձնահատկությունները՝ սովորողների ընտանիքների հետ,

— ծնողների (օրինական ներկայացուցիչների) կրթական գործունեությանը մասնակցության պայմանները:

Բաժին 2.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2.1. Հիմնական հասկացություններ

Փոխազդեցություն - սոցիալական հոգեբանության մեջ՝ մարդկանց իրական միջանձնային շփումները համատեղ աշխատանքի ընթացքում բնութագրելու եւ միմյանց վրա ունեցած փոխադարձ ազդեցությունները նկարագրելու համար: Փոխազդեցության շնորհիվ ձեռք է բերվում մի մարդու գործողությունների հարմարեցումը մյուսի գործողություններին, իրավիճակի ընդհանուր ըմբռնումը, աշխատանքի իմաստը եւ նրանց միջեւ համաձայնությունը:

Փոխգործակցություն/համագործակցություն - (ըստ Էդ. Աղայանի, Ա. Սուքիասյանի) 1) միասին՝ փոխադարձաբար, միմյանց օգնելով գործել: Միասնաբար եւ փոխօգնությամբ գործակցել: 2) (հզվդպ): Զուգորդվել, զուգակցվել իրար հետ: 3) մեկին գործակցել, գործակից դառնալ:

Հանրություն - (ըստ Էդ. Աղայանի) 1) հասարակություն, 2) գործողության կամ տեղի ընդհանրությամբ միավորված մարդկանց խումբ:

ԿԶՊԾ – կրթության զարգացման պետական ծրագիր:

1) *Հանրակրթություն* – «Հանրակրթության մասին» ՀՀ օր., հ.3.1. անձի ուսուցման եւ դաստիարակության գործընթաց, որն իրականացվում է նախադպրոցական, տարրական, հիմնական, միջն. կրթության հիմնական եւ լրացուցիչ ծրագրերով.

5) *Հանրակրթության պետական չափորոշիչ* - նորմատիվ փաստաթուղթ, որը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր

նվազագույնը, կրթական ծրագրի առավելագույն ծավալը, ըստ կրթական մակարդակների՝ շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, սովորողների գնահատման համակարգը. («Հանրակրթության մասին» ՀՀ օր. հ.՝ 3.1.)

8) *հանրակրթական դպրոց* - մեկ կամ մի քանի ընդհանուր, այդ թվում՝ հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ. (Հանրակրթ. օր. հ.՝ 3.1.)

13) *ուսուցիչ* - դպրոցում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի միջոցով ապահովող եւ այդ գործընթացի համար անմիջականորեն պատասխանատու մանկավարժական աշխատող. (Հանրակրթ. օր. հ.՝ 3.1.)

Ընտանիք- Հանրագիտարանով՝ ամուսնության կամ ազգակցության վրա հիմնըված՝ մարդկանց փոքր խումբ, որի անդամները կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխօգնությամբ, բարոյական պատասխանատվությամբ: Ըստ Էդ.Աղայանի՝ 1) Արյունակցությամբ կամ ամուսնությամբ իրար կապված, միասին ապրող մարդկանց մշտական խմբակցություն (ամուսիններ, ծնողներ, զավակներ եւն):

Ծնող - ըստ Էդ. Աղայանի՝ 2) Հայրը կամ մայրը՝ երեխաների նկատմամբ:

2.2. Փոխգործակցության էությունը

Փոխգործակցությունը զարգացման համընդհանուր ձեւ է, երեւույթների դեպի նոր որակական վիճակ տանող փոխադարձ փոփոխություն:

Մանկավարժական փոխազդեցությունը ներառվում է սոցիալական փոխազդեցություն՝ ավելի լայն հասկացության մեջ: Այն միշտ հատուկ կազմակերպված գործընթաց է՝ ուղղված կրթական խնդիրների լուծմանը:

Փոխգործակցության հիմնական բնութագիրը փոխադարձ գիտելիքներն են, փոխըմբռնումը, փոխհարաբերություններն ու փոխադարձ գործողությունները, փոխադարձ ազդեցություն, փոխկապակցվածություն եւ փոխպայմանավորվածություն:

Ուսումնական գործընթացի մասնակիցների փոխգործակցությունը խնդիրները հաջողությամբ լուծելու ամենակարեւոր ու անհրաժեշտ միջոցն է, արդյունավետությունն՝ ըստ ուսուցիչների եւ սովորողների անհատականության զարգացման, առաջադրված խնդիրների լուծմամբ ստացված արդյունքների: Ուսուցիչ-ծնող փոխգործակցության ընդհանուր նպատակը սովորողների կրթությունն է:

Ուսուցչի եւ սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) միջեւ փոխգործակցության զարգացումը գնահատվում է ըստ նրանց համատեղ գործունեության եւ հաղորդակցության բովանդակային հարստության, փոխգործակցության մեթոդների ու ձեւերի, արտաքին ու ներքին կապերի ընդլայնման ու շարունակականության, որոնց արդյունավետությունը կմեծանա, եթե.

— համագործակցող կողմերի մոտ ձեւավորվել է դրական վերաբերմունք համատեղ աշխատանքի նկատմամբ, նրանք տեղյակ են դրա նպատակներին եւ դրանում անձնական նշանակություն են գտնում.

— համատեղ է իրականացվում պլանավորումը, կազմակերպումն ու գործունեության արդյունքների ամփոփումը, ուսուցչի եւ ծնողների դերերի ու գործառույթների մանկավարժական նպատակահարմար բաշխումը.

— ստեղծվում են գործունեության տեսակների եւ մեթոդների ազատ ընտրության իրավիճակներ.

— Ուսուցչի դիրքն ու աշխատաոճը նպաստում են գործունեության մասնակիցների ինքնահիրացմանն ու ինքնարտահայտմանը:

Ուսուցչի եւ սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) միջև հարաբերությունների ձեւավորման մեծ կրթական ներուժը՝ համատեղ գործունեության մեջ է, երբ կողմերը գործում են հավասար պայմաններով:

Համագործակցային փոխազդեցության զարգացման համար ամենաարդյունավետը կոլեկտիվ ստեղծագործական գործունեության մեթոդն է. միմյանց ավելի լավ ճանաչում, հարաբերությունների զարգացում, գործունեության մասնակիցների փոխադարձ ուժեղացվա՛ծ ազդեցություն:

Գործունեության հաջողությունը, դրա մասնակիցների թիմային աշխատանքը կախված են փոխգործակցող կողմերի փոխըմբռնումից, ինչն էլ կապված է, առաջին հերթին, ուսուցչի եւ ծնողների միմյանց մասին իրազեկվածության օբյեկտիվության և համակողմանիության հետ:

Ծնողների հետ հարաբերությունները հաջողությամբ կառուցելու համար ուսուցիչը պետք է իմանա նրանց տարիքային առանձնահատկությունների, պահանջմունքների, մտադրությունների, անհատական հնարավորությունների, հետաքրքրությունների, հակումների, ծնողի գործունեության կրթական ներուժի, այս կամ այն գործունեությանը մասնակցելու պատրաստվածության մակարդակի մասին:

Ուսուցչի նկատմամբ ծնողների վերաբերմունքը պայմանավորված է նաև ուսուցչի մասին նրանց տեղեկացվածությամբ: Նրանց համար ամենամատչելին ուսուցչի գիտելիքների մակարդակի, նրա էրուդիցիայի, մասնագիտական որակների մասին տեղեկություններն են. երեխաները բավականին արագ ճանաչում են եւ տեղեկացնում իրենց ծնողներին: Միմյանց մասին գիտելիքները ոչ միայն պետք է հավաստանշվեն, այլ գիտակցվեն եւ ըմբռնվեն: Հասկանալ դիմացինին, նշանակում է ճանաչել նրա գործողությունների դրդապատճառները, վարքագիծը, բացատրել դրանք, նրա մեջ տեսնել անհատականություն եւ, հաշվի առնելով նրա առանձնահատկությունները, նրա հանդեպ ցուցաբերել բարեհոգի խստապահանջություն:

Փոխըմբռնումը ենթադրում է միմյանց սխալները տեսնելու եւ դրանք ուղղելու շահագրգիռ եւ բարեհոգի ցանկություն՝ կապված համատեղ աշխատանքում ընդհանուր հաջողության հասնելու ցանկության հետ:

«Ֆոտոն» վարժարանում, օրինակ, V-VII դասարաններում անցկացվում են մի շարք հատուկ կազմակերպված միջոցառումներ, որոնք նպաստում են ուսուցիչների եւ սովորողների փոխադարձ գիտելիքներին եւ ըմբռնմանը ու արագացնում այդ գործընթացները: Դրանցից օրինակ. «Մեր հետաքրքրությունների աշխարհը» հանդիպումը՝ այդ դասարանի թիմում աշխատող բոլոր ուսուցիչների եւ երեխաների ծնողների մասնակցությամբ, ուր յուրաքանչյուր աշակերտ, ապա դասարանի ուսուցիչը կամ դասղեկը խոսում են իրենց սիրելի զբաղմունքի ու հետաքրքրությունների մասին: Եվ ավանդույթ դարձած նմանատիպ հանդիպում-երկխոսությունները, քննարկումները, որտեղ մեծերն ու երեխաները քննարկում են իրենց հուզող հարցերը գրականության, քաղաքականության, էթիկայի ու գեղագիտության ոլորտներում, թույլ է տալիս ավելի լավ հասկանալ, փոխըմբռնել միմյանց ա՛յլ գործունեության մեջ:

Նպատակահարմար է հորինել միջոցների համակարգ, որոնք ապահովում են բարեկամական հարաբերություններ ուսուցիչների, սովորողների, ծնողների (օրինական ներկայացուցիչների) միջև՝ կրթական գործընթացի մասնակիցների միջեւ ստեղծելով իրավահավասար իրավիճակներ: Այսպես, օրինակ, օգտակար է «Ուսուցչի օրվա» հետ մեկտեղ դպրոցում ավանդական դարձնել «Աշակերտի օրը», ունենալ «Ծնողների կամ ընտանիքի տոն»: Հիշեմ դասարաններից մեկի ծնողական խորհրդի կողմից այդ դասարանին դասավանդող ուսուցիչների համար սահմանված «Լավագույն ուսուցիչ» մրցանակը:

Դպրոցի միկրոշրջանի առանձնահատկությունները, նրա փոխկապակցվածությունը շրջակա միջավայրի հետ կարող են նպաստել կամ խոչընդոտել թիմի անդամների, ուսուցիչների, ծնողների եւ աշակերտների միջեւ համագործակցային կապերի զարգացմանը: Օրինակ, մշակութային եւ կրթական հաստատությունների, մարզահամալիրի մանկավարժական նպատակահարմարության տեսանկյունից օգտագործումը. մի կողմից, հարստացնում է բովանդակությունը, ընդլայնում համատեղ գործունեության շրջանակը, մյուս կողմից էլ հնարավորություններ է ստեղծում երեխաների ու նրանց ծնողների հետ համատեղ գործունեությունը հաջողությամբ կառուցելու:

Ուսուցչի որակավորումն ու մանկավարժական հմտությունը դրսեւորվում են մի կողմից՝ որոշակի պայմանների օբյեկտիվ ազդեցությունը հաշվի առնելու, մյուս կողմից՝ երեխաների, երեխաների եւ մեծահասակների միջև փոխգործակցության զարգացմանն անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ունակության մեջ:

2.3. ԿԶՊԾ-ն որպես հանրային/սոցիալական պայմանագիր, ընտանիքի, հասարակության եւ պետության սոցիալական պատվեր

Ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) կրթական զարգացումների պետական ծրագրի մասին տեղեկացնելը ուսուցչի կարեւորագույն խնդիրն է:

Կրթության ոլորտում առկա իրավիճակը պահանջում է ընտանիքի սոցիալ-մանկավարժական աջակցության նոր, առավել արդյունավետ համակարգի ստեղծում, ընտանիքի ինստիտուտի եւ ուսումնական հաստատության միջեւ նոր հարաբերությունների կառուցում: Նման գործընթացի կազմակերպումը պահանջում է հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների էության խորը գիտակցում, դիրքորոշումների համակարգում, մանկավարժական եւ ծնողական համայնքների կողմից ընդունված հայեցակարգի մշակում: Եվ դրա համար անհրաժեշտ է ծնողների մանկավարժական ինքնակրթությունը խթանող, մանկավարժական մշակույթը զարգացնող պայմաններին համապատասխանող համակարգ՝ կապված. երեխայի (դեռահասի) զարգացող անհատականության պահանջմունքների ու կարիքների, նրա անհատականության կայացման եւ մասնագիտական ինքնորոշման գործընթացի առանձնահատկությունների, ծնողների նախկին փորձի եւ նրանց մանկավարժական պատրաստվածության հետ:

Ծնողական համայնքի եւ ուսուցչական կազմի միջեւ փոխգործակցության պայմանը հետևյալն է.

— երեխաների զարգացման տարբեր փուլերում կրթական մոտեցումների, արժեքների, նպատակների, խնդիրների, նորմերի համաձայնեցում.

— Երեխաների կրթության հարցում միասնական մոտեցումների եւ պահանջների, զարգացման հիմնական խնդիրների մշակում՝ նրանց տարիքային առանձնահատկությունների ու պահանջմունքների, զարգացման յուրաքանչյուր տարիքային փուլի, սեռի, առողջության ու խառնվածքի հաշվառմամբ:

Կրթական հաստատության եւ ընտանիքի համագործակցության կարեւորագույն սկզբնական փուլը երեխայի մասին ամբողջական տեղեկույթն է:

Ընտանիքի հետ համագործակցության ճանապարհին ուսուցիչների գործունեության ռազմավարությունը մշակելիս՝ կիրառական կարող է նկատվել, օրինակ, «Ծնողական համալսարանի» ձեւը, որի կազմակերպումն ուղղակիորեն կախված է ուսուցիչ-ծնող կառուցողական երկխոսության փոխադարձ պատրաստակամությունից:

Կրթության մասնագետների ծնողների հետ փոխգործակցության սպասելի արդյունքներն են.

— հոգեբանական ձեռնահասության մակարդակի բարձրացում.

— երկխոսության ձեւաչափով հաղորդակցման հմտությունների ընդլայնում.

— սեփական վարքի գիտակցման աստիճանի բարձրացում.

— ընտանեկան փոխգործակցության արդյունավետ մոդելների մշակում.

— ներգրավվածություն՝ դպրոցի հետ համագործակցության մեջ:

Ծնողների մանկավարժական կրթության խնդրահարույց ոլորտը կարելի է ներկայացնել հետեւյալ բլոկներով.

1. Սովորողների առողջություն, շեղումների շտկում, առողջ ապրելակերպի խթանում, անհատի սթրեսադիմացկունության բարձրացում:

2. Ուսումնական հաստատության սովորողների ծնողների համակարգային հոգեբանամանկավարժական աջակցության թարմացում՝ իրենց կողմից ընտանիքի կրթական գործառույթի իրականացումներում:

3. Սովորողի հոգեբանամանկավարժական աջակցությունը՝ նրա ընտանիքի կենսական դժվարին իրավիճակում:

/Ծնող-ուսուցիչ/ համատեղ աշխատանքի կազմակերպման սկզբունքները.

— երեխաների դաստիարակության հարցում ծնողների իրավունքի առաջնահերթությունը (ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների զարգացման, առողջության եւ բարեկեցության համար).

— տեղեկատվության արժանահավատություն (հաղորդվող տեղեկույթը պետք է հիմնված լինի գիտական (բժշկական, հոգեբանական, մանկավարժական, ֆիզիոլոգիական, իրավական և այլն) փաստերի վրա).

— տեղեկության կիրառական ու կողմնորոշիչ լինելը (ծնողներին առաջարկվող տեղեկատվությունը պետք է հնարավորինս մատչելի լինի կյանքում օգտագործելու համար).

— փոխհամագործակցություն եւ փոխադարձ հարգանք (ուսուցիչների եւ սովորողների ծնողների միջեւ, վստահության վրա հիմնված, փոխհարաբերություններ, ինչպես նաեւ երեխաների դաստիարակության ընթացքում ծագող խնդիրների լուծման կառուցողական որոնում).

— զարգացում (անհատականության, հարաբերությունների համակարգի, կենսագործունեության).

— հարաբերությունների եւ հաղորդակցության մարդասիրություն.

— երեխայի վրա դաստիարակչական ներգործության համակարգվածություն.

— ընտանիքի ու դպրոցի հետեւողականությունը՝ երեխայի սոցիալ-մշակութային փորձի ձեւավորման գործում.

<u>Ծնողների հետ դպրոցի ուսուցչական անձնակազմի աշխատանքի համակարգի առաջատար գաղափարը՝ յուրաքանչյուր աշակերտի ընտանիքի հետ գործընկերային</u>

հարաբերությունների հաստատումն է, փոխադարձ աջակցության եւ ընդհանուր շահերի մթնոլորտի ստեղծումը:

Դպրոցի եւ ծնողների համատեղ աշխատանքի կազմակերպման հիմնական խնդիրները.

1) ուսուցիչների ու սովորողների ծնողների ջանքերի համատեղումը՝ արտադասարանական միջոցառումներ կազմակերպելիս.

2) ուսումնական հաստատություններում ԿԶՊԾ-ի ներդրման հնարավորությունների, ծրագրի առավելությունների եւ առանձնահատկությունների մասին ծնողների իրազեկում (սեմինարներ, անհատական խորհրդատվություններ).

3) կրթական գործընթացում ծնողների ներգրավման պայմանների ստեղծում (ծնողական ժողովներ, համատեղ ստեղծագործական գործունեություն, օժանդակություն նյութատեխնիկական բազայի հարստացմանը).

4) ծնողների ներգրավումը դպրոցի կառավարման գործում (դպրոցական խորհուրդ, ծնողական հանձնաժողովներ) եւ այլն.

Բաժին 3.

ԱՊԱԳԱ ԸՆՏԱՆԵՍԵՐ ՄԱՐԴՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Դպրոցի եւ ընտանիքի փոխգործակցությունը արդի փուլում

Դպրոցի եւ ընտանիքի, ուսուցչի եւ ծնողի փոխգործակցությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

— կրթության միասնական օբյեկտով (առարկա, սուբյեկտ).

— երեխաների դաստիարակության ընդհանուր նպատակներով ու խնդիրներով.

— երեխաների համապարփակ ուսումնասիրության եւ նրանց զարգացման վրա ազդեցությունների համակարգման հնարավորությամբ.

— ուսուցիչների եւ ծնողների գործողությունների ներդաշնակման անհրաժեշտությամբ.

— երեխայի խնդիրների լուծման գործում դպրոցի և ընտանիքի ջանքերը համատեղելու հնարավորությամբ.

— ընտանիքների փոխհարստացման հնարավորությամբ, դասարանական եւ դպրոցական հանրույթով, փոխգործակցության յուրաքանչյուր մասնակցով:

Դպրոցի ու ընտանիքի փոխգործակցության հիմքը ընդհանուր նպատակն է. ապահովել մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների միջեւ, երեխաների սոցիալական զարգացման, դաստիարակության եւ ուսուցման համար բարենպաստ պայմաններ ստեղծող, համագործակցային հարաբերությունների ձեւավորում.

Ուսուցիչների եւ ընտանիքների համագործակցությունն ուղղված է երեխաների դաստիարակության հետևյալ ընդհանուր խնդիրների լուծմանը.

— որակյալ կրթության ապահովում.

— մասնագիտական հետաքրքրությունների զարգացում եւ երեխաների պատրաստում՝ մասնագիտության գիտակցված ընտրությանը.

— սովորողների բարոյականության եւ վարքագծի մշակույթի ձևավորում.

— դպրոցականների նախապատրաստում՝ ընտանեկան կյանքին.

— առողջ ապրելակերպի պահանջմունքի ձևավորում.

Նշված նպատակին հասնելու եւ դաստիարակության ընդհանուր խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է մասնակի մանկավարժական խնդիրների կոմպլեքս:

Ծնողների հետ աշխատանքում.

— ծնողների մոտ, երեխայի դաստիարակության գործում իրենց դերի, դպրոցի եւ դասարանի ուսումնական գործընթացին մասնակցելու անհրաժեշտության մասին ճիշտ պատկերացումների ձեւավորում.

— ծնողների սուբյեկտիվ դիրքորոշման ձևավորում՝ դպրոցի եւ դասարանի աշխատանքում, ընտանիքների եւ երեխաների հետ աշխատանքի տարբեր ձևեր իրականացնելիս.

— ծնողների հոգեբանա մանկավարժական մշակույթի ձեւավորում.

— ծնողների եւ երեխաների միջեւ հարգանքի եւ վստահության հարաբերությունների ձեւավորում.

Երեխաների հետ աշխատանքում.

— դաստիարակել ծնողների հանդեպ հարգալից ու հոգատար վերաբերմունք.

— ընտանիքի առջեւ, իր արարքների համար պատասխանատվության ձեւավորում.

— դաստիարակել ընտանիքի համար հպարտության զգացում, ընտանեկան լավագույն ավանդույթները պահպանելու եւ զարգացնելու ձգտում:

Դպրոցի եւ ընտանիքի միջեւ փոխգործակցության զարգացումը կախված է նաեւ մի շարք կազմակերպական եւ կառավարչական խնդիրների լուծումից.

— դպրոցում եւ դասարանում իրականացվող դաստիարակչական բոլոր միջոցառումներում ծնողների մասնակցության ապահովում.

— ծնողների հոգեբանա-բժշկա-մանկավարժական համակարգին ծանոթացում.

— ուսուցիչների, ծնողների հետ փոխգործակցության հիմնախնդրի վերաբերյալ, մեթոդական աշխատանքի կազմակերպում.

— դաստիարակչական գործընթացի մասնակիցների փոխգործակցության խթանման համակարգի մշակում եւ ապահովում.

— ծնողկոմիտեի աշխատանքների կազմակերպումը, նրա հեղինակության ու դերի բարձրացումը՝ դպրոցի կոլեկտիվի կենսագործունեության լուծումներում:

Փոխազդեցության զարգացման հիմնական գաղափարը մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների սուբյեկտիվ դիրքի ճանաչումն ու ապահովումն է, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր ծնող, ուսուցիչ, երեխա իրավունք եւ հնարավորություն ունի բավարարելու, իրականացնելու սեփական շահերը, կարծիք արտահայտելու եւ ակտիվություն դրսեւորելու: Ուսումնադաստիարակչական գործընթացում սա ուսուցիչների եւ ծնողների միջեւ փոխգործակցության զարգացման արդյունքն ու պայմանն է:

3.2. Դպրոցի եւ ընտանիքի համատեղ գործունեության բովանդակությունն ու ձեւերը

Ծնողների զգալի մասը պրոֆեսիոնալ մանկավարժներ չեն, կրթության ոլորտի հատուկ գիտելիքներ չունեն եւ դժվարանում են երեխաների հետ հաղորդակցումներում, լուծումների քիչ թե շատ արդյունավետ ուղիներ ուսուցչի հետ միասին են փորձում գտնել ու որոշել մանկավարժական կրթության բովանդակությունն ու ձեւերը:

Դպրոցի եւ ընտանիքի համատեղ գործունեության հիմնական ձեւերից մեկը դասարանական ժողովն է, ուր քննարկվում են ծնողների եւ երեխաների ընդհանուր շահերն արտացոլող հարցեր: Կարեւորը հանդիպման ժողովրդավարականությունն է, մասնակցության կամավորությունը, հանդիպման մասնակիցների ցանկությունները նկատի ունենալը: Սա հավասարապես շահագրգիռ մարդկանց զրույց է: Իսկ բովանդակությունը կարող է տարբեր լինել, որն իրենք՝ մասնակիցներն են որոշում:

Ծնողական ժողովը ծնողների աշխատանքի հիմնական ձեւն է, որտեղ քննարկվում են դասարանական կամ դպրոցական խմբերի կենսական հիմնախնդիրները: Դասղեկը ուղղորդում է ծնողների գործունեությունը՝ դրա իսկ պատրաստման գործընթացում: Օգտակար է ծնողական ժողովում դաստիարակության ցանկացած խնդրի քննարկումը շարունակել՝ ծնողների հետ անհատական հանդիպումներով, խմբային խորհրդածություններում: Նպատակահարմար է փոխգործակցության կոլեկտիվ, խմբային եւ անհատական ձեւերի համատեղումը:

Ծնողների ներգրավմամբ կազմվում է ծնողավարության ընթերցումների թեմատիկա: Եթե նրանք դժվարանան ձեւակերպել պարապմունքների թեմաները, ուսումնասիրության ենթակա խնդիրները, ուսուցիչն, առկա մեթոդական երաշխավորություններին նկատառմամբ, առաջարկում է հնարավոր թեմաների շարք, ինչպես նաեւ երեխաների, տվյալ կոլեկտիվին հատուկ հիմնախնդիրները:

Ուսուցիչը ծնողներին ծանոթացնում է դաստիարակության խնդիրներին, բարձրացնում նրանց մանկավարժական մշակույթը եւ օգնում զարգացնել միասնական մոտեցումներ:

Ծնողների շրջանում՝ հօգուտ ընտանիքում բարենպաստ մթնոլորտի, հարկ է.

— կարեւորել ընտանիքում հարաբերություններ զարգացնող ավանդույթները.

— նպաստել ընտանիքում դրական հարաբերությունների ձեւավորմանը, խրախուսել ընտանիքում երեխայի համար բարենպաստ մթնոլորտ ապահովող ծնողներին.

— Ընտանիքի հատուկ տոնի, հանդիսությունների կազմակերպում, մրցույթների անցկացում, ծնողների եւ երեխաների համատեղ ստեղծագործական գործունեության արդյունքների ներկայացում, ընտանիքի հոբբիների պատմություն եւ այլն.

— դաստիարակչական միջոցառման նախապատրաստության, ուսումնական առարկաներից՝ ընտանեկան ստեղծագործական առաջադրանքների կատարում.

— ծնողների եւ երեխաների համատեղ պարապմունքներ՝ ըստ նրանց իսկ առաջարկների (հաղորդակցության խնդիրների, ծնող-երեխա փոխհարաբերությունների, մասնագիտության ընտրության եւ այլնի շուրջ).

— Ըստ հետաքրքրությունների, ակումբային տիպի միավորումների ստեղծում:

Ծնողների հոգեբանամանկավարժական կրթությունը կազմակերպելիս, նպատակահարմար է.

— պարապմունքների նախապատրաստման եւ անցկացման ժամանակ երկխոսության ապահովում, խմբային աշխատանքի կազմակերպում, որը նախատեսում է մտագրոհ՝ խնդրի լուծման ուղիների հավաքական որոնում, քննարկվող հարցի վերաբերյալ առաջարկությունների մշակում, նախագծերի պատրաստում:

— երեխաների հետ միասին պարապմունքների անցկացում՝ երեխաների եւ մեծահասակների համար հետաքրքիր խնդիրների վերաբերյալ.

— տեղեկատվություն հետաքրքիր եւ օգտակար հրապարակումների, ծնողներին հուզող հարցերի վերաբերյալ գրքերի մասին.

— ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ կոնկրետ խորհուրդներ եւ առաջարկություններ ներառող տպագիր նյութերի պատրաստում:

Հարց ու պատասխանի երեկոն անցկացվում է ծնողների կամ խնդրահարույց հարցերը խմբավորելուց հետո, որոնք ծագում են երեխաների դաստիարակության եւ նրանց հետ հաղորդակցությունների ընթացքում: Ուսուցիչը կարող է պատասխանել որոշ հարցերի, իսկ մասնագետը հրավիրվում է պատասխանելու մյուսներին (օրինակ՝ հոգեբանության, սեռական դաստիարակության վերաբերյալ):

Կրթության հիմնախնդիրների շուրջ բանավեճ-մտորումները, մանկավարժական մշակույթի բարձրացման ծնողների նախընտրելի ձեւերից է: Կարող են քննարկվել

կոնկրետ իրավիճակներ՝ դասարանի կյանքից, ընտանիքներից, ներկայացումներից կամ միասին դիտված ֆիլմերից:

Ցանկալի են ամենամյա հանդիպումներ՝ տնօրինության, դասավանդող ուսուցիչների հետ: Կարեւոր ձեւ է ուսուցիչների փոխգործակցությունը ծնողխորհրդի հետ: Մի շարք դասարաններում, որտեղ ծնողները ակտիվ են ու հետաքրքրված, ծնողկոմիտեի գործառույթը կատարում են, ըստ ցանկության խմբերի բաժանված, բոլոր ծնողները, որոնց ակտիվը ուսուցիչների հենարանն է, հմուտ փոխգործակցության դեպքում այն դառնում է նրանց գաղափարների ուղեկիցը:

Ուսուցիչներին հատկապես մտահոգում է երեխաների հայրերի հետ փոխգործակցությունը. ինչպես նրանց ներգրավել ուսումնական աշխատանքում, բարձրացնել նրանց դերը երեխայի դաստիարակության գործում: Այդ նպատակով հայրերի հետ կազմակերպում են հատուկ հանդիպումներ, անցկացնում խորհրդածություն-խորհրդակցություններ:

Փոխգործակցության ձեւերն, հաճախ, կոլեկտիվ եւ խմբայինից վերածվում են, ներգործության կրթական մեծ հնարավորություններ պարունակող, ահնատական ձեվերի, ինչպես զրույցը, անկեղծ խոսակցությունը, խորհրդակցություն-մտորումը, անհատական առաջադրանքների իրականացումը, խնդրի լուծման համատեղ որոնումը: Այսպես, սրտակից զրույցը կարող է ուժեղ ազդեցություն ունենալ ծնողի վրա, էապես փոխել վերաբերմունքը ուսուցչի, երեխայի, դասարանի հոգսերի ու գործերի նկատմամբ: Նրանց հետ անհատական աշխատանքը ուսուցիչներից մեծ ջանքեր եւ հնարամտություն է պահանջում, բայց արդյունավետությունը շատ ավելի բարձր է, քան խմբինը: Անհատական շփման մեջ ծնողները յուրացնում են դպրոցի կողմից սովորողներին ներկայացվող պահանջները եւ դառնում դասղեկի դաշնակիցը: Անհատական աշխատանքի արդյունքում ձեռք բերված ծնողների բարձր ներգրավվածությունը՝ դպրոցի գործերին, հանգեցնում է աշակերտների սովորելու ցանկության ու նվաճումների ավելացմանը, երեխաների վարքի բարելավմանը, նրանց ինքնագնահատականի զարգացմանը, տնային հանձնարարությունների առավել ամբողջական կատարմանը, դպրոցում հոգեբանական մթնոլորտի եւ ուսուցիչների մասին ծնողների կարծիքի բարելավմանը:

Սովորողների ընտանիքները շատ տարբեր են, ծնողների հետ հարաբերությունները տարբեր ձեւերով են զարգանում, ինչն անդրադառնում է դպրոցի եւ ընտանիքի փոխգործակցության բնույթի ու ձեւերի վրա եւ պետք է հաշվի առնվի ծնողների ու երեխաների հետ աշխատանքը կազմակերպելիս:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Վերստին կարեւորվում է դպրոց-ընտանիք փոխգործակցությունը, այն դպրոցի/ուսուցչի կողմից կառավարելու եւ այդ համատեքստում ծնող-երեխա փոխազդեցության արդյունավետության բարձրացման խնդիրը:

2. Բացահայտված ու հիմնավորված են կրթական բարեփոխումներում դպրոց -ընտանիք համագործակցության արդյունավետ կազմակերպման մոտեցումները:

3. Դպրոց-ընտանիք համագործակցությունը, ծնողի ու նրա երեխայի փոխհարաբերությունների առանձնահատկությունները, ընտանիքի դաստիարակչական ներուժը դիտարկվում են որպես նրանց փոխգործակցության արդյունավետությունը պայմանավորող գործոններ:

4. Դպրոց-ընտանիք փոխգործակցությունը արդյունավետ է մանկավարժական որոշակի սկզբունքների, պահանջների, չափանիշների կիրառմամբ, ուսուցիչների գիտելիքներով եւ ոճերով:

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. Ուսումնական հաստատություններում ստեղծել «Ծնողական կրթության համալսարան» կամ «Ծնողավարության երեկոյան դպրոց» ձեւաչափով կենտրոններ:

2. Պարտադիր համարել դպրոցի միկրոշրջանի ընտանեկան ռեսուրսի ամենամյա գույքագրումը, այն դպրոց-ընտանիք փոխգործակցության առանցքում դիտարկելու հանգամանքը:

3. Սահմանել ներ- եւ արտա- ընտանեկան փոխգործակցության մանկավարժական արդյունավետության չափանիշները/ցուցիչները:

4. Ստեղծել կամ վերականգնել երեխային տրվող նրա անհատականության ձեւավորման ամենամյա բնութագրերը, դրանց դիտարկումն ու ներառումը՝ մանկավարժական աշխատանքում:

5. Ուսուցիչների աշխատանքի ընդունման եւ որակավորման գործընթացում թեստերի, փաստթղթերի փոխարեն առաջնային համարել գործնական հմտությունները (հանդիպում պլանավորել-անցկացնելը, երեխաների ու նրանց ծնողների հետ հաղորդակցվելու մշակույթը):

6. Բացահայտել ու համախմբել վերջին տարիների կրթական զարգացման ծրագրերի արդյունքում դասարաններում հաջողության հասած ուսուցիչներին եւ տարածել նրանց փորձը:

7. Ուժեղացնել ուսուցիչների կարողությունները կրթության բովանդակության մշակման, գնահատման առումներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշում, N 4 հավելված (VII-1.9) https://www.arlis.am/documentview.aspx?docid=122121

2. «Ուսուցիչների մասնագիտական զարգացման եվ կրթության բովանդակության գնահատումը՝ հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում», Հեղինակներ՝ Սերոբ Խաչատրյան, Սիլվա Պետրոսյան, Գայանե Թերզյան: https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf

3. ՀՀ Օրենքը՝ ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին https://www.e-draft.am/projects/4013/about

4. Ընտանիք, Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան https://hy.wikipedia.org/wiki/%D4%B8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D6%84

   Ծնող Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%AE%D5%B6%D5%B8%D5%B2

   Էդուարդ Բագրատի Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976:

5. “Pars Today” «Առողջ ընտանիք (22) Ընտանիքը՝ հասարակության հիմնական միավորը» https://parstoday.com/hy/radio/programs-i37009